ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք ,
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հոկտեմբերի 2021թվականի N 74-Ա

<<ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020թվականի մարտի 26-ի N02-Ն հրամանով՝ որոշում եմ.

1.2021թվականի նոյեմբերի 20-ին ժամը 11:00-ին հայտարարել մրցույթ <<Գեղադիր համայնքի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

20 21թ. հոկտեմբերի 13
գ.Գեղադիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, gegharir.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հոկտեմբերի 2021թվականի N 75-Ա

ԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով ,հիմք ընդունելով համայնքի ավագանու 2021թվականի հունվարի 22-ի N 7-Ա որոշմամբ հաստատված կարգը՝որոշում եմ.

1.Գեղադիր համայնքի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>>հոդվածով նախատեսված ծախսերից օգնության նպատակով Գեղադիր համայնքից Արշակ Գրիգորյանի ընտանիքին 35 000 / երեսունհինգ հազար/ ՀՀ դրամ տրամադրել միանվագ դրամական օգնություն:
2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետին վճարումն իրականացնել համայնքի բյուջեի համապատասխան հոդվածից՝երեք աշխատանքային օրվա ընթացքում:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

20 21թ. հոկտեմբերի 18
գ.Գեղադիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 հոկտեմբերի 2021թվականի N 76-Ա

ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ . ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և 104 հոդվածի 5-րդ մասերի դրույթներով՝ որոշում եմ.

1.2021թվականի դեկտեմբերի 5-ին կայանալիք Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ անցկացնելու համար ընտրական տեղամասային կենտրոն սահմանել համայքի դպրոցի շենքը՝հասցեն 5-րդ փողոց թիվ 26, այն ընդգրկում է ամբողջ գյուղը:
2.Հանձնարարել աշխատակազմի քարտուղարին տեղամասային ընտրական կենտրոնի գտնվելու մասին իրազեկել լիազոր մարմնին, ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին,դպրոցի տնօրինությանը:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

20 21 թ. հոկտեմբերի 19
գ.Գեղադիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հոկտեմբերի 2021թվականի N 77-Ա

ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ,ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով՝ որոշում եմ.

1. 2021 թվականի դեկտեմբերի 5-ին կայանալիք Տեղական ինքնակառավարման մարմինների համամասնական ընտրություններին Գեղադիր համայնքի տարածքում քարոզչական պաստառներ,քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝
1) Գեղադիր համայնքի 1-ին , 2-րդ և 4-րդ փողոցներ:
2.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

20 21թ.հոկտեմբերի 21
գ.Գեղադիր